ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 հունիսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

87
(2753)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԱՐԱՊՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՏՈՐՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երեկ Հայաստանի սահմաններին եւ նաեւ Արցախում լարված իրավիճակ էր: Ադրբեջանական կողմը ոչ միայն փորձել էր առաջանալ Հակարիի կամուրջի ուղղությամբ ու դրոշ տեղադրել, այլեւ կրակել է Սյունիքի դիրքերի ուղղությամբ՝ վիրավորելով ԱԱԾ աշխատակցին՝ կիրառելով ԱԹՍ: Իսկ ինչո՞վ էր զբաղված ՀՀ կառավարությունն ու Ազգային ժողովը:

ՀՀ իշխանությունները լուրջ դեմքով խորհրդարանում քննարկում էին ՀՀ պետական բյուջեի 2022 թվականի կատարողականի արդյունքները՝ չմոռանալով քննադատել նաեւ ընդդիմությանը՝ հին ու նորի համեմատություն անելով:

Երեկ ամբողջ օրը Նիկոլ Փաշինյանը խորհրդարանում էր, օրվա վերջում արդեն քննադատում էր մեր գերբը եւ պետական խորհրդանիշները. առաջարկում է այլ կերպ ավարտել ՀՀ օրհներգը:

«Ինքը՝ գաղափարախոսությունը ճիշտ է, այսինքն՝ տեքստի հետ ես որեւէ խնդիր չունեմ, բայց ավարտվում է զոհվելու տողով եւ զոհվելու տեսարանով: Առաջարկում եմ փոփոխություն կատարել: Բայց քաղաքական առումով ճիշտ կլինի, որ ՀՀ հիմնը ավարտվի հետեւյալ տողերով՝

«Նայի՛ր նրան երեք գույնով,
Նվիրական մեկ նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծա Հայաստան»»,- ասաց ՀՀ վարչապետը:

Երեկ ԱԺ նիստը ձգվեց մինչեւ 20:00-ն. ՔՊ-ականներն ավարտեցին արագ, որ շտապեն Դիլիջան: Այնտեղ մեկնարկում է ՔՊ քաղաքական ժողովը, եւ նիստը կխանգարեր նրանց: Այսօր, սակայն, կառավարության նիստ է լինելու, եւ օրակարգն արագ սպառելուց հետո գործադիրն էլ կշտապի Դիլիջան:

ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանը թերեւս ամենաանհասանելի նախարարներից է լրատվամիջոցների համար. վերջինս իր նշանակման օրվանից գրեթե մշտապես խուսափել է պատասխանել լրագրողների հարցերին:Արարատ Միրզոյանի ղեկավարած կառույցն էլ, հավանաբար, հետեւելով իր օրինակին, փակ է լրագրողների համար. ԱԳՆ-ից հազվադեպ են պատասխանում զանգերին, իսկ գրավոր հարցումներին էլ պատասխանում են ամիսներ անց: Պարզվում է՝ ԱԳՆ-ն սեւեռի-սպիտակների քաղաքականությամբ է առաջնորդվում լրատվամիջոցների դեպքում, ունի սիրելի ու ոչ սիրելի լրատվամիջոցների ցուցակ: Երեկ սա առավել ընդգծվեց, երբ պարզ դարձավ, որ ԱԳՆ-ն կազմակերպել էր Հայաստանում հավատարմագրված դեսպանատների ներկայացուցիչների եւ մի խումբ լրագրողների այցը Երասխ, որը մի քանի օր է՝ թշնամու թիրախում է հայտնվել, կրակոցներ են այդ ուղղությամբ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հատուկենտ լրագրողների են տարել Երասխ: Մեզ չեն հրավիրել, եւ պարզեցինք, որ լրատվամիջոցների ընտրությունն արել է փոխնախարար Վահան Կոստանյանը նախարար Միրզոյանի անունից: Երեկ ողջ օրը փորձեցինք հասկանալ՝ ԱԳՆ-ն ինչ սկզբունքով է առաջնորդվել, որ «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրակազմին չի ներգրավել Երասխ մեկնողների ցանկում: ԱԳՆ-ից պարզաբանեցին, որ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Արմեն Խաչատրյանն է կազմակերպել այցը: Նրան էլ ողջ օրը չգտանք: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցեցին, որ յուրային եւ ոչ յուրային լրատվամիջոցների ցանկն իրականում կազմել է «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը հանրությանն առավել հայտնի է «Ֆեյքերի ՊՈԱԿ» անունով: Հավանաբար, «Ժողովուրդ» օրաթերթի աղմկահարույց բացահայտումները այդ կառույցի գործունեության մասին դուր չեն եկել նրանց, ինչի պատճառով հայտնվել ենք նրանց սեւ ցուցակում: Փաստորեն, «Ֆեյքերի ՊՈԱԿ»-ից այնքան են մեզանից վրդովվել ու սրտնեղել, որ անգամ չեն բարեհաճել տեղեկացնել, որ լրատվամիջոցների այց է կազմակերպվում Երասխ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի քննչական բաժնում քրեական գործ կա, որով անցնում են ԱԺ նախկին պատգամավոր Մելիք Մանուկյանը՝ Շշի Մելոն, եւ քրեական աշխարհի ներկայացուցիչ Ազատանցի Պետոն: Այդ քրեական գործով շոշափվում են շատ պաշտոնյաների, այդ թվում՝ Արցախի պաշտպանության նախարարի նախկին տեղակալ Սամվել Կարապետյանի (Օգանովսկու) եւ այլ անձանց անունները, որոնց կանդրադառնանք առաջիկայում: Քրեական գործի թեման այն է, որ Շշի Մելոն եւ այլ պաշտոնյաներ գործարանի համար պահանջվող հումքը իրենց մատնանշած ընկերությունից վերցնելու համար հարց ու պատասխան են ունեցել միմյանց հետ: Ի դեպ, Ազատանցի Պետոն Օշականցի Գեւորիկի եւ «օրենքով գող» Ջապի մտերիմ ընկերն է, ինչպես նաեւ գերեւալ Օգանովսկու սանիկը: Նշենք, որ 2021թվականին Նիկոլ Փաշինյանն էկոնոմիկայի նախարարի պաշտոնակատար Վահան Քերոբյանի ուղեկցությամբ այցելել էր Կոտայքի մարզում գործող «Սարանիստ» ընկերություն, որը զբաղվում է ապակիների արտադրությամբ, իսկ բոլորովին վերջերս էլ սկսել է գործել կոնյակի գործարանը: Սա հենց նույն Մելիք Մանուկյանի գործարանն է: Նկատենք, որ Նիկոլ Փաշինյանի իշխանության եւ Մելիք Մանուկյանի հարաբերությունների «ջերմացումը», ըստ էության, սկսվեց 2019-ի ամառվա դեպքերից հետո, երբ պայթեցվեց Մելոյի մեքենան, ապա եղբայրը՝ Ռոբերտ Մանուկյանը, փորձեց այդ մեքենան դեպքի վայրից տեղափոխել: Երբ նրան բերման էին ենթարկել, 6 ոստիկանի էր ծեծի ենթարկել: Ռոբերտ Մանուկյանին մեղադրանք էր առաջադրվել իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու հոդվածով: Նրան ձերբակալել էին, ապա մի քանի օրից բաց թողել, եւ հետագայում այդ բոլորը գործերը փակել էին: Դրանից հետո Շշի Մելոն դարձավ իշխանությունների «սրտի գործարարը» եւ սկսեց աշխատել նրանց համար: Այս ամենին զուգահեռ՝ իշխանությունները քրեական գործ ունեն Մելոյի եւ նախկին պաշտոնյաների մասով, որոնք չեն փակում եւ որպես մահակ պահում են նրանց գլխին, որպեսզի հարկ եղած դեպքում այն օգտագործեն եւ վերահսկեն գործարարին:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Տիգրան Պետրոսյանը, որի մասով ԲԴԽ-Ն կարգապահական վարույթ է հարուցել, դիմել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ դատավոր Տիգրան Պետրոսյանը դիմել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ պահանջելով վարույթ հարուցել ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի եւ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի գործունեության մասով եւ պարզել, թե արդյոք այն, ինչ անում են երկու ընկերներ՝ ԲԴԽ նախագահն ու արդարադատության նախարարը, շահերի բախում չէ:Ըստ դատավորի՝ երկու ընկեր՝ մեկը ԲԴԽ նախագահ է, մյուսը՝ արդարադատության նախարար, վարույթներ են հարուցում դատավորների նկատմամբ: Ի վերջո, ինչ սկզբունքով են ընտրվում դատավորների նկատմամբ վարույթները: Ըստ Պետրոսյանի դիմումի՝ Վճռաբեկ դատարանում շատ դատավորների որոշումների հետեւանքով ՄԻԵԴ-ը ընդդեմ Հայաստանի որոշումներ է կայացրել, սակայն ԲԴԽ-ն որոշել է ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ որոշման համար, արդարադատության նախարարի դիմումի հիման վրա, կարգապահական վարույթ հարուցել Վճռաբեկի դատավորներ Արտակ Բարսեղյանի եւ իր նկատմամբ, ինչը խիստ կասկածելի է:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Աշնանը Երեւանում սպասվում են ավագանու ընտրություններ: «Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է Կենտրոն համայնքի նախկին ղեկավար Վիկտոր Մնացականյանի հետ, որը եւս մասնակցելու է ավագանու ընտրություններին

-Պարոն Մնացականյան, գիտենք, որ աշնանը Երեւանում տեղի են ունենալու ավագանու ընտրություններ, եւ Դուք հայտարարել եք, որ մասնակցելու եք այդ ընտրություններին: Նախ՝որքանո՞վ եք մրցակցային համարում այս ընտրությունները. տպավորություն է, որ հայրենի քաղաքական դաշտում բոլոր քաղաքական ուժերը հայտ են ներկայացրել՝ մասնակցելու ընտրություններին: Ինչու՞ երեւանցին հենց Ձեզ պիտի ընտրի:

-Շնորհակալ եմ հարցի համար: Հատկապես մրցակցային բառը շատ հետաքրքիր ասոցիացիաներ առաջացրեց, բայց ես չեմ կարող իհարկե պատասխանել կամ հասկանալ ամբողջ քաղաքական դաշտի դերը: Եթե չեմ սխալվում, նախորդ օրը լսեցի, որ շուրջ 180 կուսակցություններ կան. իհարկե ամբողջը չեն, ակտիվ մասն է: Ես անկեղծ շատ ուրախ եմ, եւ ինչքան ակտիվ լինեն ընտրությունները, այնքան կշահի քաղաքը, որովհետեւ ես արդեն սկսել եմ նկատել իմ գործընկերների, իրենց մրցակիցների նախընտրական ծրագրերը: Բոլորն էլ շատ հետաքրքիր են, բոլորն էլ հավակնոտ են, եւ կարեւոր չէ այստեղ այս պահին, թե ընտրություններից 4 ամիս առաջ ստարտային ինչ փուլում են գտնվում, կարեւորը՝ վերջում՝ ընտրության օրը եւ հաջորդ օրերին, ինչ արդյունքներ կգրանցեն: Եւ ինձ էլ շատ հետաքրքիր է, ինքս էլ կցանկանամ իմանալ, թե քաղաքացիները ինչքանով են ուսումնասիրել կամ ինչքան խորքային են հետաքրքրված ու անհանգստացած քաղաքային խնդիրներով ու քաղաքական մարտահրավերներով:

Ես կարծում եմ՝ շատ կուսակցություններ, ցավոք, չունեն քաղաքային պրոբլեմների միջով անցնելու կամ քաղաքային կառավարման փորձը, որը պետք կգա մեզ մոտակա ամիսներին, քանի որ մենք պետք է ներկայացնենք երեւանցիներին մեր ծրագրերը: Խոսքն այն ծրագրերի մասին է, որոնք կդարձնեն Երեւանն ավելի ապահով, ավելի հարմարավետ, ավելի գրավիչ, եւ նաեւ հաշվի առնելով աշխարհաքաղաքական խնդիրները՝ ավելի դիմագրավող՝ որպես համայնք: Դա կարող է լինել անվտանգային առումով, պարենային անվտանգության առումով, էլ չասեմ (իհարկե չեմ ուզում վախեցնել մեր բնակիչներին) պատերազմական գործողությունների դեպքում:

-Պարոն Մնացականյան, կխնդրեմ նաեւ ներկայացնեք, թե որ կուսակցության կողմից եք առաջադրվելու, Ձեր նշանաբանը, ովքեր են լինելու Ձեր թիմակիցները: Կուզեմ՝ խոսեք նաեւ Ձեր ծրագրերի մասին. որո՞նք եք այս պահին համարում Երեւանում ամենալուրջ խնդիրները, որոնք հրատապ լուծում են պահանջում: Քաղաքացիներն, օրինակ, հիմնականում բողոքում են աղբի ու տրանսպորտի խնդիրներից: Սրա լուծումն ինչպե՞ս եք պատկերացնում:

-Կուսակցության առումով կդժվարանամ պատասխանել. մի քանի օրից մենք կհայտարարենք, երբ կունենանք նախարարության գրանցման վերջնական փաստաթուղթը:

Կարծում եմ՝ Երեւանի առջեւ ծառացած ամենամեծ ու վտանգավոր խնդիրներից մեկը տրանսպորտն է. այն ավելի խորքային խնդիր է, քան աղբի խնդիրը, քանի որ ճիշտ աշխատանքի դեպքում աղբի խնդիրը մեկ ամսում կարելի է վերացնել: Ամենակարեւորն այն է, որը եւ ես տեսնում եմ քաղաքապետարանի աշխատելաոճի մեջ, որ մենք պատկերացում չունենք, թե ինչպես պետք է այս խնդիրը լուծվի, բայց նաեւ չենք հասկանում՝ որն է խնդիրը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԲԱՐՁՐԱՑՎԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է. «Բրյուսել կատարած աշխատանքային այցի շրջանակներում Հայաստան-Բելգիա բարեկամական խմբի կազմով հանդիպում ենք ունեցել ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի նախագահ Գասպար Կարապետյանի գլխավորած պատվիրակության հետ:

Հանդիպման ընթացքում ներկայացրել եմ մեր երկու հանրապետությունների՝Հայաստանի եւ Արցախի առջեւ ծառացած մարտահրավերները:

Խոսելով Ադրբեջանի կողմից Արցախի՝ արդեն կես տարի շրջափակման հետեւանքով առաջացած հումանիտար խնդիրների, Ադրբեջանի վարած էթնիկ զտման եւ ցեղասպան քաղաքականության մասին՝ բարձրացրել եմ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման անհրաժեշտության հարցը, ընդգծել, որ միջազգային հանրությունը պետք է նպաստի Կոսովոյի օրինակով Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ճանաչմանը:

Գործընկերներիս ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի ոտնձգությունները, դրանց հետեւանքով հայկական կողմից ունեցած զոհերի եւ վիրավորների, ինչպես նաեւ քաղաքացիական օբյեկտների, շտապ օգնության մեքենաների թիրախավորման դեպքերը: Խնդրել եմ հնարավորության դեպքում նպաստել ՀՀ սուվերեն տարածքից դուրս բուֆերային գոտի ստեղծելու ջանքերին՝ ելնելով անվտանգային նկատառումներից:

Հանդիպման վերջում առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնել պարոն Գասպար Կարապետյանին եւ իր թիմին՝ հայանպաստ լայնածավալ աշխատանքի համար: «Դուք, Բելգիայում ապրելով, շատ ավելի հայրենանվեր աշխատանք եք իրականացնում, քան որոշ ՀՀ գործիչներ Հայաստանում»,- նշել եմ իմ խոսքում»:

ԹԵԺ ԿՐՔԵՐ՝ ԱՐՄԱՎԻՐԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություն ստացավ, որ Արմավիրի 4-րդ դպրոցը փակվում է, եւ ուսուցիչները ակցիա են անցկացնում: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում 4-րդ դպրոցի տնօրենի տեղակալ Լիլիթ Եփրեմյանն ասաց, որ դպրոցի ուսուցիչները հենց այս պահին գնում են Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն՝ բողոքելու:

«Դպրոցը փակվում է այն հիմնավորմամբ, որ երկու ավագ դպրոցներում աշակերտների թիվը գնալով նվազում է, եւ 4-րդ դպրոցը միանում է առաջինին, բայց այս մասին մեզ որեւէ կերպ չեն տեղեկացրել. մենք իմացել ենք համացանցում տարածվող հայտարարություններից: Մեր մտահոգությունը նրանում է, որ փաստացի մեր շենքի ճակատագիրը պարզ չէ: Հիմա գալիս ենք ԿԳՄՍ նախարարություն՝ նախարարի հետ հանդիպելու պահանջով, եւ մեր պահանջն է, որպեսզի նախագիծը հետ կանչվի, քանի որ այն շատ կողմնակալ է: Մեր դպրոցները հավասար պայմաններով չեն միանալու առաջին դպրոցին, որը մեզ համար անընդունելի է», - նշեց նա:

Այսինքն՝ հավասար պայմաններ չեն: «Այսինքն՝ չեն միավորում երկու դպրոցները հավասար, այլ 4-րդ դպրոցը միանում է առաջինին. ինչո՞ւ մենք չպետք է հավասար պայմաններով միավորվենք: Փոխնախարարը երեկ մեզ ասաց, որ առաջին դպրոցի ուսուցիչները կշարունակեն աշխատել, իսկ մեր պարագայում կլինեն կրճատումներ: Անհասկանալի է, եթե երկու կառույց միանում են իրար, ինչո՞ւ են մեկից կրճատումներ անում, մյուսից՝ ոչ: Ինչպե՞ս է ստացվում, որ միավորումից առաջացած վնասները կրում է միայն մեր դպրոցն ու անձնակազմը»,- նշեց Լիլիթ Եփրեմյանը:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԻՆՉՈ՞Ւ Է ԴՈՒՐՍ ՄՆԱՑԵԼ ՀՅԴ ԳՄ ԿԱԶՄԻՑ

Հունիսի 9-11-ը կայացած ՀՅԴ Հայաստանի 26-րդ գերագույն ժողովի ժամանակ կուսակցությունը թեժ քննարկումների արդյունքում Գերագույն մարմնի նոր կազմ է ընտրել:

Կազմում ընդգրկվել են՝

1. Թադեւոս Ավետիսյանը,
2. Լիլիթ Գալստյանը,
3. Արգիշտի Գեւորգյանը,
4. Վարդան Հակոբյանը,
5. Հակոբ Մաթիլյանը
6. Գեղամ Մանուկյանը,
7. Պետրոս Մեղրյանը,
8. Իշխան Սաղաթելյանը,
9. Իգոր Սարգսյանը,
10. Աշոտ Սիմոնյանը,
11. Խաչատուր Ստեփանյանը,
12. Գերասիմ Վարդանյանը,
13. Տարոն Տոնոյանը:

ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ է ընտրվել Իշխան Սաղաթելյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Սաղաթելյանի թեկնածության շուրջ ՀՅԴ-ականները տարաձայնություններ են ունեցել, դժվարությամբ են կարողացել համաձայնության գալ ու վերընտրել նրան: Մյուս հետաքրքիր փաստն այն է, որ ՀՅԴ ԳՄ նախորդ կազմում, որը ընտրվել էր 2021թ.-ին, կար Արծվիկ Մինասյանը, հիմա, սակայն, նա չկա Գերագույն մարմնի նոր կազմում: Ինչո՞ւ, ո՞րն է խնդիրը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արծվիկ Մինասյանը պարզաբանեց. «Ես չեմ ցանկացել ընդգրկվել ՀՅԴ ԳՄ նոր կազմում աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով»:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՍՈՒՐ ՔՆՆԱԴԱՏԸ

ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը պատժվում է իր քաղաքական գործունեության համար: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց ԱԺ պատգամավոր, Մարդու իրավունքների եւ անվտանգության հարցերով հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը:

Նշենք, որ իրավապահները ձերբակալել են ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանին իր նկատմամբ ընտրված խափանման միջոցը խախտելու համար, նաեւ առաջիկայում նրան կալանավորելու մասին միջնորդություն կներկայացվի դատարան:

«Աշոտյանը Նիկոլ Փաշինյանի իշխանության ամենասուր քննադատն է, եւ ամենասուր քննադատն է հայրենիքը հանձնող այն իշխանության նկատմամբ, որոնք անթաքույց ներկայացնում են իրենց ծրագրերը»,- ասաց Թագուհի Թովմասյանը:

Թովմասյանի խոսքով՝ այդ քրեական գործը երկար տարիների պատմություն ունի. «Հեղափոխությունից հետո այս գործը սկսվել է քննվել: Տարիներ շարունակ տարբեր առիթներով այս քրեական գործի հիմքերն են փոխվել, փորձ է արվել տարբեր կողմերից մոտենալ գործին, որպեսզի հնարավոր լինի պատժել Աշոտյանին, բայց մինչեւ օրս չի հաջողվել: Ստացվում է, որ այն, ինչը ՀՔԾ-ն չէր կարողանում հիմնավորել, հիմա ՔԿ-ն է որոշել կալանավորել քաղաքական գործիչ Արմեն Աշոտյանին: Կարծում եմ՝ սա երկար կյանք չի կարող ունենալ, բայց այն, որ մենք կունենանք քաղբանտարկյալ, եւ ժողովրդավար երկրում կլինի քաղբանտարկյալ, դա միանշանակ է»:

ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԵՏ

Հայաստանի եւ Իտալիայի միջեւ ստորագրվել է ճանապարհային ենթակառուցվածքների ոլորտում համագործակցության հուշագիր: Այն ստորագրել են «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանը եւ Իտալիայի ազգային ճանապարհների միության (Anas) գործադիր տնօրեն Ալդո Իսին: Այս մասին հայտնում են «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ղեկավար Գոռ Ավետիսյանն ու դեպարտամենտի մի խումբ աշխատակիցներ Իտալիայում էին ՀՀ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանի գլխավորած պատվիրակության կազմում: Այցելության նպատակն էր ծանոթանալ Իտալիայի ճանապարհային ենթակառուցվածքներին, այս ոլորտում ամրապնդել հայ-իտալական գործակցությունը, ինչպես նաեւ իրականացնել փորձի փոխանակում:

Հուշագրով սահմանվում է կողմերի միջեւ համագործակցություն՝ տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված լավագույն փորձի, ճանապարհային ոլորտի նորարարությունների, նոր տեխնոլոգիաների մասին տեղեկատվության փոխանակման, ճանապարհային անվտանգության բարձրացման միջոցով:

Հուշագրով նախատեսվում են երկու երկրների մասնագետների վերապատրաստում, պարբերական ճանաչողական այցեր՝ նպաստելու ճանապարհային ենթակառուցվածքների բարելավմանը, ինչպես նաեւ համատեղ կոնֆերանսների, սեմինարների, հանդիպումների, այլ ծրագրերի կազմակերպում:

Anas-ի ղեկավար Ալդո Իսիի խոսքով՝ ստորագրված փաստաթուղթը երկու երկրների համար համագործակցության եւ ինժեներական գիտելիքների փոխանակման կարեւոր հնարավորություն է:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գոռ Ավետիսյանն էլ շեշտեց, որ հայկական կողմը շահագրգռված է ճանապարհաշինության եւ ճանապարհների կառավարման ոլորտում աշխարհի լավագույն փորձն ուսումնասիրելու եւ այն Հայաստանում ներդնելու հարցում: Նա կարեւորեց նաեւ մասնագետների շարունակական վերապատրաստումը, ինչը ոլորտի զարգացման նախադրյալներից է:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ

160 ԱՐՑԱԽՑԻ ՍՏԱՑԵԼ Է ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

«Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալության նախաձեռնությամբ՝ Արցախում շուրջ մեկ ամիս առաջ մեկնարկած առողջապահական ծրագրի շրջանակում Մարտունու շրջանի Մյուռիշեն, Կարմիր շուկա, Հաղորտի, Բերդաշեն, Սոս գյուղական համայնքների շուրջ 160 բնակիչներ հնարավորություն են ունեցել օգտվել առաջնային բուժօգնության շարժական ծառայություններից:

Բժշկական շարժական բրիգադը՝ հատուկ մասնագիտական վերապատրաստում անցած ընտանեկան բժիշկները, ժամանակակից սարքավորումներով կահավորված ավտոմեքենայով այցելել են համայնքներ եւ տեղում բնակիչներին մատուցել թերապեւտիկ ծառայություններ, իրականացվել է նաեւ ընդհանուր սկրինինգ եւ լաբորատոր հետազոտություններ, առավել տարածված վարակիչ եւ ոչ վարակիչ հիվանդությունների հայտնաբերում, կառավարում եւ դրանց վերահսկում:

«Մենք ենք մեր սարերը» գործակալության այս ծրագրի հիմնական գործընկերներն առողջապահական ոլորտում գործունեություն ծավալող «ՀԵՆԱՐ» բարեգործական հիմնադրամը եւ «Sante Armenie» միավորումն են: Ծրագիրն իրականացվում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության համագործակցությամբ:

«Ծրագիրը ընդամենը մեկ ամսից ավելի է, ինչ մեկնարկել է, բայց արդեն շոշափելի արդյունքներ է արձանագրել: Այն մշակվեց շրջափակման ընթացքում, երբ հատկապես սուր էր վառելիքի խնդիրը, եւ մեր համայնքների բնակիչները հնարավորություն չունեին առաջնային բուժօգնության ծառայությունների համար ամեն անգամ հասնել Ստեփանակերտ: Մենք սերտորեն համագործակցում ենք Արցախի առողջապահության նախարարության հետ: Շարժական բրիգադն այցերն իրականացնում է նախարարության կողմից ներկայացված ժամանակացույցով: Հաշվի առնելով ծրագրի արդյունավետությունն ու դրական արձագանքը՝ «Մենք ենք մեր սարերը» գործակալությունն իր նվիրատուների աջակցությամբ հուլիսից նախատեսում է գործարկել արդեն երկրորդ շարժական բրիգադը, որը կսկսի ծառայություններ մատուցել նաեւ մյուս շրջաններում»,- ասել է «Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալության սոցիալական ծրագրերի ղեկավար Արմեն Մանգասարյանը:

«Այս ընթացքում մենք ավելի շատ մատուցել ենք ընդհանուր թերապեւտիկ ծառայություններ, իրականացրել սրտանոթային համակարգի հետազոտություններ, խորհրդատվություն տրամադրել եւ բուժօգնություն ցուցաբերել: Եվս մեկ նոր շարժական բրիգադը կօգնի ավելի մեծ ծավալով ծառայություններ մատուցել, ինչն այս իրավիճակում կենսական կարեւորություն ունի մեր գյուղաբնակ բնակչության համար»,- նշել է շարժական բրիգադի բժիշկ Արամ Գեւորգյանը: «Առաջին շարժական բրիգադը սկսեց Մարտունու հինգ համայնքներից, շուրջ մեկ ամսվա ընթացքում ամեն օր այցեր են կատարվել, եւ ակնհայտ է, որ բնակչությունն այսպիսի ծառայության կարիքը շատ ունի: Մեքենան հագեցած է ժամանակակից սարքավորումներով, եւ դա թույլ է տալիս տեղում համապատասխան բուժօգնություն ցուցաբերել: Մենք ուրախ ենք, որ կարողացել ենք մաս դառնալ այս կարեւոր ծրագրին ու իրական աջակցություն ցուցաբերել առանց այդ էլ շրջափակման ծանր իրավիճակին դիմակայող բնակչությանը»,- ասել է Արցախում «ՀԵՆԱՐ» հիմնադրամի ներկայացուցիչ Յուրի Ասրիյանը:

«Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալությունը ձեռնարկում եւ իրագործում է Արցախի եւ Սյունիքի զարգացման նախագծեր՝ համագործակցելով Արցախի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության կառավարությունների, ինչպես նաեւ տեղական, միջազգային եւ մասնավոր այլ կազմակերպությունների հետ: «Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալությունը հիմնադրել են Ռուբեն Վարդանյանը եւ նրա գործընկերները:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԼԵՆԱ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Լենա Նազարյանը 2022 թվականին ձեռք է բերել 24 մլն արժողությամբ նոր բնակարան Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում: Գնումը կատարվել է «Ալվինա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ից՝ համատեղ սեփականությամբ: Լենա Նազարյանը 2017 թվականին եւս հայտարարագրել է բնակարան համատեղ սոփականությամբ ամուսնու՝ Նարեկ Բաբայանի հետ, որը գտնվում է Կատայքի մարզի Առինջ գյուղում: Մեկ բնակարան էլ հայտարագրված է Երեւանում՝ Նորք Մարաշում: Ընդհանուր առմամբ, Լենա Նազարյանն ունի հայտարարագրված 3 բնակարան: Նշենք նաեւ, որ Լենա Նազարյանի ամուսինը՝ Նարեկ Բաբայանը, 2022 թվականի հաշվետու տարվա հայտարարգիր դեռ չի ներկայացրել, ինչը կարգազանցություն է: Համենայնդեպս նրա հայտարարագիրը կայքում հասանելի չէ:

Նախկին լրագրող եւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Լենա Նազարյանի եկամուտները, 2021 թվականի համեմատ, աճել են 104 մլն 982 հազար ՀՀ դրամով: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2021 թվականի համեմատ, աճել է 22 մլն դրամով:

Նազարյանի վարկային միջոցների մնացորդի մայր գումարի չափը 2022 թվականին կազմել է 43 մլն 954 հազար դրամ:

Հիշեցնենք, որ 2017 թվականին, երբ նոր էր ձեւավորվում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, Լենա Նազարյանը հայտարարել էր. «Շատ կուզենայի, որ հայտարարագրվեն պաշտոնյաների անձնական ճամփորդությունները: Քիչ թե շատ աշխարհ տեսած կոռուպցիոներները հիմա անիմաստ են համարում կառուցել 7-րդ առանձնատունը կամ գնել 10-րդ ավտոմեքենան եւ նախընտրում են ճոխ ճամփորդությունը»,-

Այս խոսքերի հեղինակը նախորդ տարի հանգստի է մեկնել, ճանապարհածախսի, կեցության ծախսի համար 2022 թվականի հայտարարագրում նշել է, թե ծախսել է 2 մլն 100 հազար դրամ: Իսկ թե որտեղ է գնացել, իրականում այդքան է ծախսել, թե ավելին, թափանցիկության մասին խոսող Նազարյանը թաքցրել:

ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՃԻ ԳՐԱՎԱԿԱՆԸ

2022 թվականի բյուջեի կատարողականում նշված է, որ ՀՀ Ժողովրդագրական իրավիճակը նկարագրող ցուցանիշների պայմաններում անհրաժեշտ է, որ երկրում տարեկան ծնվի ավելի քան 44.000 երեխա՝ ապահովելու համար երկրի բնակչության թվի աճ:

«Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ պատգամավոր Վաղարշակ Հակոբյանից հետաքրքրվեց, թե ինչ է անում պետությունը, որպեսզի Հայաստանում տարեկան ծնվի այդքան երեխա:

- Ծնելիության աճի հետ կապված այն քաղաքականությունը, որը այսօր որդեգրել է մեր իշխանությունը, ես կարծում եմ՝ իր արդյունքները կտա, բայց որպեսզի ավելի մասնագիտական քննարկում լինի, ես կարծում եմ՝ մենք կոնկրետ թվերով, վերլուծությամբ ու հստակ քայլերով պետք է դիտարկենք, բայց պետք է նշել մի քանի հանգամանք. ուզում եմ նշել, որ մենք էականորեն ավելացրել ենք երկրորդ եւ երրորդ երեխաների ծնվելիս հատկացվող միանվագ գումարները, սոցիալական երաշխիքները, եւ այլ քայլեր են ձեռնարկվում, ինչը կարծում եմ՝ հանգեցնելու է ծնելիության աճին:

Ծնելիության աճի ու, առհասարակ, մեր ժողովրդի բարեկեցության աճի ամենակարեւոր կետերից է անվտանգային խնդիրները: Եվ ես հենց անվտանգային խնդիրների լուծման դեպքում եմ տեսնում թե՛ բնակչության թվաքանակի աճի, թե՛ տնտեսական աճի խնդիրների հանգուցալուծում եւ լիահույս եմ, որ անվտանգային խնդիրների լուծման շնորհիվ հենց ծնելիության մակարդակն էլ կբարձրանա:

ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

ԲԱՑԱՐԿԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺՎԵՑ

Հակակոռուպցիոն դատարանում դատավոր Կարապետ Բադալյանի նախագահությամբ, շարունակվեց ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանին եւ նրան փոխկապակցված եւս 16 անձանցից ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքերի եւ դրամական միջոցների բռնագանձման գործով դատական նիստը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին ՀՀ տարածքային կառավարման նախկին նախարար, ԱԺ նախկին նախագահ, նախկին ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանից, նրա կնոջից՝ Ջ.Ա.-ից, որդուց, դստերից, իրեն փոխկապակցված այլ անձանցից (աշխատակիցներ, ազգականներ եւ նրանց ամուսիններ) հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 59 անշարժ գույք, որից 15-ը՝ Երեւան քաղաքում, մեծամասամբ՝ Կենտրոն վարչական շրջանում, 12-ը՝ Արարատի մարզի Մխչյան համայնքում, 10-ը՝ Նարեկ համայնքում, 2-ը՝ Կոտայքի մարզ, Արզական համայնքում, 6-ը՝ Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնքում, 1-ը՝ Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնքում, 1-ը՝ Գեղարքունիքի մարզ, Սեւան համայնքում, 6-ը՝ Տավուշի մարզ, Դիլիջան համայնքում, 3-ը Կոտայքի մարզ Մեղրաձոր համայնքում, 1-ը՝ Արարատի մարզ, Մարմարաշեն համայնքում, 1-ը Արարատի մարզ, Այնթապ համայնքում, 1-ը՝ Արարատի մարզ, Արեւաբույր համայնքում,
- 4 ավտոմեքենա,
- 20 ընկերությունների մասնակցություններ եւ բաժնետոմսեր,
- շուկայականից էականորեն ցածր արժեքով օտարված 9 գույքերի շուկայական արժեքներ՝ ընդհանուր՝ 1 մլրդ 628 մլն 277 հազար 90 դրամ,
- ընկերություններին տրված փոխառություններից ծագող պահանջի իրավունք՝ 11 մլն 292 հազար 570 ԱՄՆ դոլարի, 687 մլն 500 դրամի եւ 3 մլն 117 հազար 680 եվրոյի չափով,
- 21 մլրդ 202 մլն 67 հազար 797 դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի եւ օրինական եկամուտներով չհիմնավորվող, բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված կամ չնույնականացված դրամի հանրագումար:

Նիստի ընթացքում որպես 3-րդ անձ ընդգրկված, ՌԴ-ում գործող «Կարտոն Ուպակ» ընկերության ներկայացուցիչ Իլոնա Միրզոյանը միջնորդեց դատական նիստը հետաձգել, քանի որ ընկերությունը գործով ներգրավելու որոշումը ստացել է հունիսի 2-ին:

Փաստաբանը խնդրեց նիստը հետաձգել, որպեսզի ինքը կարողանա ծանոթանալ գործի նյութերին: Դատավորը բավարարեց ներկայացված միջնորդությունը:

Նշենք նաեւ, որ նախորդ նիստին պատասխանող, Հովիկ Աբրահամյանի թիկնազորի ղեկավար Բագրատունի Բարսեղյանի փաստաբանը գործը քննող դատավորին բացարկի միջնորդություն էր ներկայացրել: Փաստաբանը կասկածի տակ էր դրել դատավորի անաչառությունը:

Երեկ տեղեկացանք, որ Կարապետ Բադալյանը մերժել է ներկայացված միջնորդությունը:

ՀՐԱՏԱՊ

ԴԱՏԱՎՈՐԸ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է ՀԻՎԱՆԴԱՆՈՑ

Ինչպես հայտնի է, ԲԴԽ-ն հարուցել է կարգապահական վարույթներ, այդ թվում՝ Սնանկության դատարանի դատավոր Սամվել Թադեւոսյանի նկատմամբ, որը երեկ ազատման դիմում գրեց եւ ազատվեց դատավորի պաշտոնից: Քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Խառատյանի, ինչպես նաեւ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Տիգրան Պետրոսյանի ու Արտակ Բարսեղյանի նկատմամբ եւս կարգապահական վարույթներ են հարուցվել: Հունիսի 19-ի առաջին նիստն է, որը, ըստ էության, չի կայանա, քանի որ դատավորներից Արտակ Բարսեղյանը տեղափոխվել է հիվանդանոց:

Հրապարակել էինք, որ Սնանկության դատարանի դատավոր Սամվել Թադեւոսյանի կողմից երեկ ներկայացված ազատման դիմումը խորը արմատներ ունի: Սամվել Թադեւոսյանը չսպասեց ԲԴԽ-ի՝ հունիսի 19-ի նիստին եւ հետագա քննության որոշմանը ու մեկ քայլ առաջ անելով՝ լքեց դատական համակարգը:

Հիշեցնենք՝ Եվրոպական դատավորների միությունը օրերս բավականին կոշտ հայտարարություն էր տարածել Հայաստանի դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական գործընթացների մասով՝ դրանք համարելով ճնշում անկախ դատական համակարգի վրա:

ՄԵԹՈԴՆԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ԹՄՐԱՆՅՈՒԹԻ

Ոստիկաններն ամեն ջանք թափում են ապօրինի թմրաշրջանառության դեմ պայքարելու համար, բայց պայքարի մեթոդները պետք է փոխել, որովհետեւ թմրանյութերի օգտագործման տեմպն աճում է. բացահայտումները նպաստում են, բայց չեն կանխարգելում. այս մասին հունիսի 15-ին լրագրողների հետ զրույցում ասաց «Քաղաքացիական խմբակցության» պատգամավոր Հայկ Սարգսյանը:

«Ապօրինի թմրաշրջանառությունը լուրջ խնդիր է, որի առջեւ կանգնած է ամբողջ աշխարհը: Դա կասեցնելու համար պատիժը խիստ պետք է լինի, մեզ մոտ սպառնում է 7-10 տարվա ազատազրկում, որը կրկին խիստ է, բայց, միեւնույնն է, մարդիկ գնում են այդ քայլին: Հաջորդ քայլը պատժի անխուսափելիությունն է, այսինքն՝ հանցագործը պետք է հաստատ իմանա՝ պատժվելու է»,- նշեց նա:

Պատգամավորի կարծիքով՝ թմրանյութերի վերաբերյալ բացահայտած հանցագործությունների դեպքում ոստիկաններին պետք է հավելյալ պարգեւատրել:

«Հայտնաբերված իրավախատման համար ոստիկանները ստանում են որոշակի պարգեւավճար, բայց ընթացակարգն է բարդ: Պետք է լինի պարգեւատրման մեծ ֆոնդ»,- ասաց Սարգսյանը:

Անդրադառնալով իշխող խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանի հայտարարությանը, ըստ որի՝ Հայաստանում միջին վիճակագրական խնջույքները չեն անցնում առանց թմրանյութերի, Սարգսյանն ասաց. «Ես թմրանյութ չեմ օգտագործում, իմ մասնակցած խնջույքների ժամանակ էլ, բարեբախտաբար, չի լինում թմրանյութ: Ես չեմ ուզում մեկնաբանել գործընկերոջս ասածը, ինքն այլ կոնտեքստում է ասում»:

Սարգսյանն ասաց, որ այս պահին մանրամասների չի տիրապետում Երասխում Ադրբեջանի սանձանազերծած սադրանքի մասին:

«Պետք է տեղեկանամ, որ գնահատական տամ: Տարբեր հատվածներում տարբեր ծառայություններ են իրականացվում, կոնկրետ չգիտեմ՝ այդ հատվածում սահմանապահներն են, թե Պաշտպանության նախարարության զորքերը»,- ընդգծեց Սարգսյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՆՆՎՈՒՄ ԵՆ

ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՇՏԻՑ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության Չարենցավանի բաժնի համայնքային ոստիկանները օպերատիվ տեղեկություններ են ստացել, որ Ալափարս գյուղի մի բնակիչ իր տան տանիքում պահում է զենք եւ զինամթերք:

Ինչպես տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունից, տեղեկությունը ստուգելու նպատակով ոստիկաններն այցելել են 41-ամյա ալափարսցու տուն: Ոստիկանների պահանջով նա ներկայացրել է 5,45 մմ տրամաչափի «ԱԿ» տեսակի ինքնաձիգ, 9 մմ տրամաչափի առանց գործարանային համարի ինքնաձիգ, ինքնաշեն թմբուկավոր ատրճանակ, տարբեր տրամաչափի եւ տարբեր զենքերի 620 փամփուշտ եւ 2 փամփշտատուփ: Նա հայտնել է, որ 44-օրյա պատերազմի մասնակից է եւ հայտնաբերվածը բերել է Արցախից:

Ըստ աղբյուրի՝ կազմված փաստաթղթերն ուղարկվել են Չարենցավանի քննչական բաժին:

Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 14-ին՝ ժամը 02.00-ին, ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնել էր, որ Ֆուչիկի փողոցում դանակահարություն է եղել:

Ոստիկանությունից հայտնում են, որ հինգ րոպե անց «Արմենիա» բժշկական կենտրոնից է հաղորդում ստացվել. որովայնի եւ ձեռքի կտրածծկած վերքերով բուժօգնության էր դիմել 36-ամյա երիտասարդ: Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի բնակիչը հայտնել էր, որ Ֆուչիկի փողոցում անծանոթ անձը դանակահարել է իրեն:

ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հաջորդ ահազանգն է ստացվել. հայտնում էին, որ Մարգարյան փողոցում դանակը ձեռքին տղամարդը հարձակվում է քաղաքացիների վրա:

ՆԳՆ ոստիկանության ՊԾ Երեւանի գնդի 3-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկները ժամը 02.15-ին Մարգարյան փողոցում հայտնաբերել, մարմնական վնասվածք պատճառելու հիմնավոր կասկածանքով ձերբակալել եւ ոստիկանության Մաշտոցի բաժին են տարել 29-ամյա մի երիտասարդի:

Կատարվում է նախաքննություն:

- *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 14-ից 15-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 56 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՕՏԱՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Դիլիջանի համայնքապետարանը Դիլիջան քաղաքում հողամասը Երեւան քաղաքի Կենտրոն թաղամասի բնակչուհուն օտարելուց 9 տարի անց այդ գործարքն անվավեր ճանաչելու պահանջով դիմել է դատարան: Դիլիջանի համայնքապետարանի ներկայացուցիչ Վաղինակ Մարկոսյանը 2022թ. հունիսի 8-ին հայցադիմում է ներկայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան՝ ընդդեմ Երեւան քաղաքի բնակչուհի Թամարա Ալեքսանդրի Մանուկյանի, քաղաքացիական հայցով որպես երրորդ անձ ներգրավված է ՀՀ կադաստրի կոմիտեն: Հայցվորը՝ Դիլիջանի համայնքապետարանը, ներկայացրել է աճուրդն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջներ՝ խնդրելով անվավեր ճանաչել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Դիլիջան քաղաքի Սարալանջի փողոցի թիվ 31/1 հասցեի 903 քառակուսի մետր մակերեսով հողամասի 2013թ. հունիսի 13-ին կայացած աճուրդը, որպես հետեւանք՝ անվավեր ճանաչել Դիլիջան համայնքի եւ Թամարա Մանուկյանի միջեւ 2013թ. հունիսի 13-ին նոտարական կարգով կնքված վերոհիշյալ հասցեի 903 քմ տարածքով հողամասի առքուվաճառքի պայմանագիրը, անվավեր ճանաչել այդ հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը: Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022թ. հունիսի 20-ի որոշմամբ համայնքապետարանի հայցադիմումը վերադարձվել է՝ հայցադիմումի թերությունները վերացնելու, այն եռօրյա ժամկետում դատարան կրկին ներկայացնելու համար: Հայցվորի կողմից հայցադիմումում թույլ տրված թերությունները վերացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, հայցադիմումը կրկին ներկայացվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան: 2022թ. հուլիսի 12-ին դատարանը որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին: 2022թ. սեպտեմբերի 5-ին Թամարա Մանուկյանը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան առարկություն է ներկայացրել այն մասին, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման վայրի դատարան: 2022թ. նոյեմբերի 2-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում կայացած նախնական դատական նիստում դատավոր Նանա Դալլաքյանը որոշել է սույն քաղաքացիական գործով պատասխանողի ներկայացուցիչ Շուշանիկ Ադամյանի միջնորդությունը բավարարել, քաղաքացիական հայցով գործը հանձնել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը: 2023 թ. մարտի 14-ից Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում նշված քաղաքացիական հայցով կայանում են նախնական դատական նիստեր. հաջորդ նիստը նշանակված է հունիսի 26-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՎԱՐԿԱՆԻՇ

ՇԱՀԱՎԵՏ ՎԱՅՐԵՐԸ՝ ԸՍՏ Wildberries-Ի

Wildberries միջազգային առցանց հարթակը հրապարակել է ապրանքների ստացման կետեր բացելու նպատակով ներդրումների համար ամենահեռանկարային վայրերի վարկանիշը ԱՊՀ երկրներում: Հիմնական չափորոշիչներն են երկրի բնակչությունը եւ գործող կետերի քանակը:

1. Հայաստան: Ստացման նոր կետեր բացելու լավագույն քաղաքներն են Արարատն ու Ստեփանավանը, Հրազդանը նույնպես հեռանկարային է: Հանրապետության մեծությամբ երկրորդ քաղաքում՝ Գյումրիում, ստացման կետերի պակաս կա քաղաքի հարավային հատվածում:

2. Բելառուս: Քաղաքների լավագույն կետերը գտնվում են Բորիսովում, Մոգիլեւում (արեւելքում եւ արեւմուտքում կետերի պակասն ավելի շատ է), Գրոդնոյում, Բրեստում (քաղաքի արեւմտյան մասը), ինչպես նաեւ Մինսկի մարզում: Գնորդների համար ստացման կետերի պակաս նկատվում է Գոմելի արեւելքում եւ արեւմուտքում, ինչպես նաեւ Վիտեբսկի ծայրամասերում:

3. Ղազախստան: Ամենահեռանկարային վայրերն են Տարազը, Կարագանդան եւ Շիմքենդը: Երկրում պատվերների ստացման կետերի մեծ մասը գտնվում է Աստանայում, սակայն դրանք բոլորը կենտրոնացված են քաղաքի կենտրոնում:

4. Ղրղզստան: Մայրաքաղաքը շարունակում է գրավիչ մնալ ներդրումների համար. Բիշքեկի հյուսիսում ստացման կետերի պակաս կա: Օշը, Կարակոլը եւ Ջալալ-Աբադը ստացման կետեր բացելու թոփ վայրերն են:

5. Ուզբեկստան: Հաշվի առնելով, որ առցանց հարթակը այս երկրում վաճառքներ սկսել է ընդամենը մեկ տարի առաջ, ստացման կետերը սահմանափակ են (ինչը նշանակում է՝ մայրաքաղաքի որոշ հատվածներում դրանց պակաս կա), եւ ներկայումս ստացման կետեր կան Տաշքենդում, Սամարղանդում եւ Բուխարայում: Ստացման կետեր բացելու համար հեռանկարային են երկրի բոլոր խոշոր քաղաքները՝ Սամարղանդ, Բուխարա, Ֆերգանա, Նամանգան, Անդիջան, Նուկուս, Կոկանդ:

2023-ի մայիսի վերջի դրությամբ Wildberries-ի ստացման գործընկերային եւ սեփական կետերի ընդհանուր թիվն ավելացել է 1,5 անգամ՝ հասնելով 1584-ի, որոնցից 390-ը՝ Ղազախստանում, 271-ը՝ Հայաստանում, 839-ը՝ Բելառուսում, 22-ը՝ Ղրղզստանում եւ 62-ը՝ Ուզբեկստանում: Ընդ որում՝ ստացման գործընկերային կետերի պակաս, սեփական կետերի համեմատ, նկատվում է ԱՊՀ երկրների բոլոր խոշոր քաղաքներում:

Ստացման գործընկերային կետերի ընդհանուր հասույթը (եկամուտը) 2023-ի մայիսին տարեկան կտրվածքով աճել է 6 անգամ, ԱՊՀ երկրներում աճի դինամիկան գերազանցում է Ռուսաստանի միջին ցուցանիշը:

2023-ի հունիս Wildberries-ը վերսկսել է ստացման գործընկերային նոր կետերի բացման ծրագիրը: Այն ենթադրում է նոր կետեր բացելիս ստացման կետի շրջանառության տոկոսի ավելացում ինչպես առաջնահերթ մանուշակագույն, այնպես էլ ստանդարտ կանաչ գոտիներում: Հարթակի ինտերակտիվ քարտեզի վրա կարելի է ընտրել ամենահարմար կետը՝ point.wb.ru հղումով:

Լրացուցիչ եկամտի դրույքաչափերը հաշվարկվում են՝ ելնելով գոտուց եւ գտնվելու վայրից: Մանուշակագույն գոտում ստացման կետի բացումը Հայաստանում ձեռնարկատերերին թույլ կտա եկամուտ ստանալ շրջանառության 2,61%-ի չափով, Բելառուսում՝ 2,87%, Ղազախստանում՝ 2,54%, Ղրղզստանում՝ 2,41%, Ուզբեկստանում՝ 2,41%: Որպես բոնուս՝ բոլոր գործընկերները, որոնք նոր կետեր են բացում առաջնահերթ գոտում, նվեր կստանան ցուցատախտակ: Կանաչ գոտում եկամտի դրույքաչափը ենթադրում է հետեւյալը՝ Հայաստանում՝ 2,22%, Բելառուսում՝ 2,44%, Ղազախստանում՝ 2,16%, Ղրղզստանում՝ 2,05%, Ուզբեկստանում՝ 2,05%:

«Մենք շարունակում ենք զարգացնել Wildberries-ը որպես առցանց հարթակ փոքր բիզնեսի համար բոլոր երկրներում, որտեղ մենք գործում ենք: 2023-ին մենք նախատեսում ենք էլ ավելի ընդլայնել համագործակցությունը ԱՊՀ երկրների ձեռնարկատերերի հետ, ավելացնել լոգիստիկ կարողությունները, ինչը նրանց թույլ կտա հաջողությամբ զարգացնել իրենց բիզնեսը մեր օգնությամբ»,- ասվում է Wildberries-ի մամուլի ծառայության տարածած հաղորդագրությունում:

ԳՆԱՃ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՆ՝ ԱՅՍՕՐ

Տարիներ շարունակ Հայաստանի անշարժ գույքի շուկայում գների որոշակի աճ է նկատվում:

Ազգային ժողովի նիստի ժամանակ այս մասին ասաց Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը:

«Այս առումով երկու մեթոդ ունենք. փորձում ենք անշարժ գույքի շուկայի գները հիմնականում համադրել մարդկանց իրական եկամուտների աճի, ֆինանսական կամ ոչ ֆինանսական ակտիվների աճի հետ: Մեր երկու մեթոդներով էլ համադրելով՝ մենք տեսնում ենք, որ անշարժ գույքի շուկայում աճը ավելի բարձր է, քան իրական եկամուտների աճը, ուստի, մեր կարծիքով, անշարժ գույքի շուկայում կա որոշակի ավելի աճ, քան պետք է լիներ»,- ասաց Գալստյանը:

ԿԲ նախագահը նաեւ անդրադարձավ հիփոթեքային վարկերի շուկայում իրենց դիտարկումներին՝ նշելով, որ անցած տարվա ընթացքում դիտարկվել է տոկոսադրույքի աճ:

«Կենտրոնական բանկը վերջին երկու տարվա ընթացքում վարել է զսպող վարկային քաղաքականություն: Բնականաբար, Կենտրոնական բանկի կողմից տոկոսադրույքի բարձրացումը հանգեցնում է շուկայում այլ տիպի տոկոսադրույքների բարձրացման՝ ներառյալ նաեւ հիփոթեքային վարկերը: Հիփոթեքային վարկավորման տոկոսադրույքի աճը եղել է ավելի մեղմ, քան նույնիսկ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի աճը»,- նշեց Գալստյանը:

ՊԱՅՔԱՐՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՉԷ

Կենտրոնական բանկը չի համարում, թե գնաճի դեմ պայքարն ավարտված է:

Այս մասին ասաց ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը:

«Անցյալ տարվա ընթացքում գնաճը պայմանավորված է եղել թե՛ առաջարկով, թե՛ պահանջարկով: Պահանջարկի հիմնական բաղադրիչը եղել է արտածին, այսինքն՝ մենք ունեցել ենք միջազգային այցելուների ներհոսք, որոնք պահանջարկ են ձեւավորել Հայաստանի ապրանքների ու ծառայությունների նկատմամբ, որի հետեւանքով մենք տեսնում ենք, որ նույնիսկ մինչեւ հիմա հյուրանոցային եւ ռեստորանային ծառայությունների գնաճը 8.7 տոկոս է: Ես փորձեցի տրամաբանորեն բացատրել, թե ինչու է ԿԲ-ն ավելի զուսպ տոկոսադրույքն իջեցնելու պարագայում, որովհետեւ մենք չենք համարում, որ գնաճի դեմ մեր պայքարն ավարտված է»,-ասաց Գալստյանը:

Անդրադառնալով առաջարկի գործոններին՝ նա նշեց, որ անցյալ տարվա ընթացքում եղել է դրվագ, որ միջազգային ապրանքահումքային ապրանքներն ու բնամթերքը թանկացել են, դրանով է պայմանավորված եղել դրամավարկային քաղաքականության ուղղությունն ու ընթացքը:

ԿԲ վերջին կանխատեսմամբ՝ 2023-ի տնտեսական աճը 6.9 տոկոս է: «Սակայն պետք է հասկանանք, որ երկարաժամկետ կամ միջնաժամկետ հատվածում տնտեսությունը չի կարող հարատեւ աճել ավելի շատ, քան իր պոտենցիալն է»,-նշեց Գալստյանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 30-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ



Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ «Դիլիջանի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիա առարկայի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝գրավոր եւ բանավոր՝ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),

2.փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.անձնագրի պատճենը,

4.ինքնակենսագրություն (Ձեւ 4),

5.թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի (դրանց առկայության դեպքում),

6.մեկ լուսանկար՝3x4 չափի,

7.այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ,

9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 29.06.2023թ. ներառյալ՝ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 07.07.2023թ. ժամը 12:30-ին Դիլիջանի ավագ դպրոցում, հասցեն՝ք. Դիլիջան, Մյասնիկյան 61:

Տեղեկությունների համար զանգահարել (0268) 2-74-31, (099) 09-01-53 հեռախոսահամարներով:

ԱՊՀ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՆԻՍՏԻ ՄԱՄՆԱԿԻՑ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը մասնակցել է Ղրղզստանի Հանրապետության մայրաքաղաք Բիշքեկում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի նիստին:

Նիստին մասնակցում էին պատվիրակներ ԱՊՀ անդամ ութ երկրներից, ինչպես նաեւ ԱՊՀ գործադիր կոմիտեի, ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հետ աշխատանքի բազային կազմակերպության՝ Ռուսաստանյան տեխնոլոգիական համալսարանի եւ Միջազգային Դելփյան կոմիտեի ներկայացուցիչները:

Նիստին մասնակցելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի անդամ, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի ղեկավարած պատվիրակության կազմում Բիշքեկ էր մեկնել նաեւ

նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ եւ շարունակական կրթության վարչության պետ Զարա Ասլանյանը:

Նիստը հանդիսավորությամբ բացել են Ղրղզստանի կրթության, տեղեկատվության, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Ալթինբեկ Մակսուտովը եւ փոխվարչապետ Էդիլ Բայսալովը: Նրանք կարեւորել են ԱՊՀ շրջանակներում երիտասարդության ոլորտում համագործակցությունը:

Խորհրդի մասնակիցները ներկայացրել են երիտասարդության ոլորտում կատարած աշխատանքները, առաջիկայում նախատեսվող ծրագրերը, այդ թվում՝ ԱՊՀ մասնակից պետությունների միջազգային երիտասարդական համագործակցության 2021-2030 թվականների ռազմավարության 2021-2022 թթ. եւ 2023-2024 թթ. գործողությունների ծրագրերի շրջանակներում իրականացրած եւ ընթացքում գտնվող ծրագրերը: Քննարկվել են ս.թ. հոկտեմբերի երրորդ տասնօրյակում Բելառուսի մայրաքաղաք Մինսկում կայանալիք «100 գաղափար՝ ԱՊՀ համար» միջազգային երիտասարդական նախագծի եզրափակիչ փուլի նախապատրաստական աշխատանքները եւ ԱՊՀ տարածքում երիտասարդության ոլորտում համագործակցության զարգացման այլ հարցեր:

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրել է 2021-2030 ռազմավարության շրջանակներում Հայաստանում իրականացված ծրագրերը՝ կարեւորելով «100 գաղափար» նախագիծը, կամավորության զարգացմանն ուղղված քայլերը, ԱՊՀ անդամ պետություններում ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներին ՀՀ երիտասարդության ներկայացուցիչների մասնակցությունը, ինչպես նաեւ վերահաստատել է 2026 թվականին Կապանում՝ որպես ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաքում միջոցառումները բարձր մակարդակով կազմակերպելու հանձնառությունը:

Խորհրդի ընդունած որոշումներով՝ ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի հաջորդ նիստը տեղի կունենա 2023 թվականի հոկտեմբերին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում, իսկ խորհրդի նախագահությունը հերթական մեկ տարի ժամկետով Ղրղզստանից կփոխանցվի Բելառուսին: Միաժամանակ Մինսկում կանցկացվի նաեւ «100 գաղափար՝ ԱՊՀ համար» միջազգային երիտասարդական նախագծի եզրափակիչ փուլը, որին Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է 7 գաղափար:

Նիստի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ա. Մարտիրոսյանը ունեցել է նաեւ մի շարք երկկողմ հանդիպումներ մասնակից պետությունների պատվիրակությունների ղեկավարների հետ, այդ թվում՝ հյուրընկալող երկրի՝ Ղրղզստանի կրթության, տեղեկատվության, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Մարատ Տագաեւի հետ, որի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել երիտասարդական քաղաքականության ոլորտում հայաստանյան փորձի ներկայացման համար:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» 9

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2023թ.-ի հուլիսի 03-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից f. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Թիվ 54 լոտ՝ ոսկյա զարդեր՝ 83,6 գր. ընդհանուր քաշով, որից 71,4 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 65,4 գր.)՝ 585 հարգի, 911.500 ՀՀ դրամ, 7,3 գր. քաշով ոսկյա զարդերը՝ 500 հարգի, 85.700 ՀՀ դրամ, 4,9 գր. քաշով ոսկյա զարդը՝ 958 հարգ, 112.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 1.109.200 ՀՀ դրամ: Թիվ 55 լոտ՝ ոսկյա զարդ՝ 40 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 557.000 ՀՀ դրամ: Թիվ 56 լոտ՝ ոսկյա զարդ՝ 24,1 ընդհանուր քաշով (զուտ քաշը 24 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 334.000 ՀՀ դրամ: Թիվ 57 լոտ՝ ոսկյա զարդ՝ 19,7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 19,5 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 271.000 ՀՀ դրամ: Թիվ 58 լոտ՝ ոսկյա զարդեր՝ 13,4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 12,2 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 169.900 ՀՀ դրամ: Թիվ 59 լոտ՝ ոսկյա զարդեր՝ 12,3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 12 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 167.000 ՀՀ դրամ:

Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/. հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00-ն, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է՝դիմումի հիման վրա:

Հեռ. 043 00-42-27:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՎԱՃԱՌՔԻ Է ՀԱՆՎԵԼ Gucci-Ի ՊԵՆՏՀԱՈՒՍԸ

Gucci-ի հիմնադրի ժառանգները տարիներ շարունակ գնորդ գտնելու փորձերից հետո կրկին վաճառքի են հանել Մանհեթենի իրենց պենտհաուսը. այս մասին հայտնում է NY Post-ը:

2016 թվականից ի վեր Ալեսանդրա եւ Ալլեգրա Գուչի քույրերը փորձում են վաճառել Էմփայր Սթեյթ Բիլդինգին նայող միջքաղաքային դուպլեքս պենտհաուսը: Երկու ներքին աստիճաններ եւ երկու առանձին վերելակներ տանում են դեպի տուն: Պենտհաուսն ինքնին բաժանված է «ժամանցային» եւ ննջասենյակների հարկերի:

Բացի այդ, տունն ունի երկու փայտով վառվող բուխարի, մեծ կինոդահլիճ, անձնակազմի համար նախատեսված խոհանոց, 13 ննջասենյակ, 10 լոգասենյակ եւ սաունա:

«Դասավորությունը նախատեսված է ընտանիքի մի քանի անդամների կամ անձնակազմի համար՝ պահպանելով ապրելակերպը, որը համապատասխանում է սերտորեն կապված բազմասերունդ հարստությանը», - ասում է անշարժ գույքի գործակալ Լոյ Կառլոսը:

Գուչիո Գուչիի ծոռնուհիներն առաջին անգամ պենտհաուսը վաճառքի են հանել 2015 թվականին 45 միլիոն դոլարով, իսկ մեկ տարի անց իջեցրել են գինը մինչեւ 35 միլիոն դոլար, բայց գնորդ այդպես էլ չի գտնվել: Գործակալի խոսքով՝ եթե նախկինում այդ գումարը չափազանց բարձր էր, ապա այսօր բավականին ընդունելի գին է: «Այո, մինչ այդ գինը մի քիչ գերագնահատված էր: Բայց հիմա, նախորդ տարիների համեմատ, այն բավականին մրցունակ է դարձել»,- մանրամասնել է Լոյ Կառլոսը:

ՍՊՈՐՏԱՅԻՆ

ՀԱՅՏՆԻ ԵՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԸ

Ֆուտբոլային «Եվրո-2024»-ի ընտրական մրցաշարի Ուելս - Հայաստան հանդիպումը կսպասարկի բուլղարական մրցավարական խումբը:

Հանդիպման մրցավար է նշանակվել Գեորգի Կաբակովը:

Մրցավարի օգնականներն են Մարտին Մարգարիտովը եւ Դիյան Վալկովը, չորրորդ պաշտոնյան է Ռադոսլավ Գիդժենովը. հաղորդում է ՀՖՖ-ի կայքը:

VAR-ի մրցավար է նշանակվել Դրագոմիր Դրագանովը, VAR-ի մրցավարի օգնական՝ Իվայլո Ստոյանովը:

Ուելս - Հայաստան հանդիպումը տեղի կունենա հունիսի 16-ին Կարդիֆում եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով ժամը 22:45-ին:

ՄՐՑԱՇԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԱԾ Է

Երեւանի «Միկա» մարզադահլիճում մեկնարկել է ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր, Եվրոպայի չեմպիոն Ստեփան Սարգսյանին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի 25-րդ միջազգային մրցաշարը, որին մասնակցում է 15 երկրի 125 ըմբիշ: Հաբեթնակ Կուրղինյանի գլխավորած հավաքականը Ստեփան Սարգսյանի մրցաշարին մասնակցում է մեծ կազմով, այդ թվում՝ ուժեղագույն ըմբիշներով:

57 կգ քաշային կարգում կմրցեն Եվրոպայի եռակի չեմպիոն, աշխարհի կրկնակի բրոնզե մեդալակիր Արսեն Հարությունյանը, Եվրոպայի բրոնզե մեդալակիր Մանվել Խնձրցյանը, Առաքել Մովսեսյանը եւ Սարգիս Բեգոյանը:

61 կգ՝Արտավազդ Հարությունյան, Վրեժ Գեւորգյան, Նորիկ Հարությունյան, Մեժլում Մեժլումյան եւ Էդիկ Հարությունյան:

65 կգ քաշային կարգում կմրցեն Եվրոպայի չեմպիոն Վազգեն Թեւանյանը, Գեւորգ Թադեւոսյանը, Հայկ Աբրահամյանը եւ Հրաչյա Մարգարյանը:

70 կգ՝ Եվրոպայի փոխչեմպիոն Արման Անդրեասյան, Արթուր Սարդարյան, Արտյոմ Իսահակյան, Գեւորգ Մխեյան, Տիգրան Ղազարյան եւ Նարեկ Հարությունյան:

74 կգ՝ Աշխարհի Մ23 առաջնության բրոնզե, Եվրոպայի Մ23 առաջնության արծաթե մեդալակիր Հրայր Ալիխանյան եւ Արմեն Մուսիկյան:

79 կգ՝ Մ23 աշխարհի բրոնզե մեդալակիր Արման Ավագյան, Արսեն Իսրաելյան, Ռազմիկ Սիմոնյան:

92 կգ՝Ազատ Կարապետյան:

97 կգ՝ Մ23 Եվրոպայի բրոնզե մեդալակիր Սերգեյ Սարգսյան եւ Խաչատուր Խաչատրյան:

130 կգ՝ Երիտասարդների Եվրոպայի կրկնակի չեմպիոն, երիտասարդների աշխարհի փոխչեմպիոն Լյովա Գեւորգյան եւ Մարտին Սիմոնյան:

Հայաստանի հավաքանը ներկայացուցիչ չունի միայն 86 կգ քաշային կարգում:

Հաբեթնակ Կուրղինյանի գլխավորած հավաքականի համար մրցաշարը նախընտրական է սեպտեմբերին Սերբիայում անցկացվելիք աշխարհի առաջնության համար, որտեղ խաղարկվելու են Փարիզի օլիմպիական խաղերի ուղեգրեր:

Սահմանված է մրցանակային ֆոնդ. հաղթող ըմբիշը կստանա 3000 ԱՄՆ դոլար, արծաթե մեդալակիրը՝ 2000, իսկ բրոնզե մեդալակիրը՝ 1000 ԱՄՆ դոլար: Նույնքան կստանա նաեւ չեմպիոնի մարզիչը: Հունիսի 15-ին՝ առաջին մրցումային օրը, մրցագորգ են դուրս եկել 57, 61, 65, 70, 74 կգ քաշային կարգերի ներկայացուցիչները:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԵՐԲՈՐԴԸ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Հունահռոմեական ոճի ըմբշամարտի պատանեկան հավաքականը թիմային հաշվարկում երրորդն է Եվրոպայի առաջնությունում:

Հայաստանի ներկայացուցիչներից վստահ մրցելույթներ է ունեցել Պետրոս Աշկարյանը: 65 կգ քաշայինների պայքարում պատանի ըմբիշը հաղթել է բոլոր մրցակիցներին ու նվաճել է ոսկե մեդալ՝ կանգնելով պատվո հարթակի առաջին աստիճանին: Եզրափակիչում Աշկարյանը 5-3 հաշվով առավելության է հասել վրացի Գեորգի Չիկաիձեի նկատմամբ:

Հայաստանի եւս 4 ներկայացուցիչ՝ Յուրիկ Մխիթարյանը (45 կգ), Սամվել Տերտերյանը (60 կգ), Գոռ Խաչատրյանը (71 կգ) եւ Գրիշա Ոսկանյանը (92 կգ), դարձել են բրոնզե մեդալակիրներ:

Եվրոպայի պատանեկան առաջնությունը կտեւի մինչեւ հունիսի 18-ը: Հաջորդիվ մրցագորգը կտրամադրվի ազատ ոճային ըմբիշներին: Հայաստանի հավաքականը հանդես կգա հետեւյալ կազմով՝

Արմեն Պապիկյան (45 կգ), Արման Հարությունյան (48 կգ), Սաշա Պետրոսյան (51 կգ), Սամվել Գեւորգյան (55 կգ), Տիգրան Բունիաթյան (60 կգ), Վլադիմիր Ազարյան (65 կգ), Նարեկ Նիկողոսյան (71 կգ), Ռազմիկ Եփրեմյան (80 կգ) Վարուժան Հովհաննիսյան (92 կգ), Հենրիկ Հայկյան (110 կգ):

«ԲԱՐՍԵԼՈՆԱ»-Ն ՆՈՐ ՀԱՄԱԶԳԵՍՏ ՈՒՆԻ

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, Մադրիդի «Ռեալ»-ը ներկայացրել էր իր նոր համազգեստը:

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնա»-ն եւս ներկայացրել է նոր համազգեստ, որով կանցկացնի տնային հանդիպումները:

«Մենք միավորում ենք մարզիկների, արտիստների, բլոգերների նոր սերունդը: Նրանք միավորվել են, որպեսզի ցույց տան ուղին»,- նշվում է ակումբի հաղորդագրությունում:

Կատալոնական ակումբի տեխնիկական հովանավորը Nike ընկերությունն է:

Իսպանացի Չավիի գլխավորած թիմը Իսպանիայի ավարտված առաջնությունում տիտղոսը նվաճել էր՝ վաստակելով 88 միավոր եւ 10 միավորով գերազանցելով երկրորդ տեղը գրաված «Ռեալ»-ին:

● *Հունիսի 17-ին Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Մխ, Աննա, Աննա կամ կրքոտ կիրակի» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ բնակելի տարածքների սեփականաշնորհման համար:
Մովսես Գրիգորյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հանրակացարանային բնակելի տարածքները սեփականաշնորհվում են՝ տվյալ հանրակացարանը տնօրինող վերադաս կառավարման մարմին 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձի կողմից ներկայացված դիմումի հիման վրա, նրա հետ բնակվող ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության առկայության դեպքում:
Պետական գույքի կառավարման կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դիմումին կից ներկայացվում են իրավասու մարմինների կողմից տրված՝ անձի՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթելու եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու փաստը եւ զբաղեցրած հանրակացարանային բնակելի տարածքում անձի՝ 3 տարվանից ավելի բնակվելու փաստը հաստատող տեղեկանքներ:

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ

ՀԱՐՑ. Արդյոք «Զվարթնոց» օդանավակայանում գործո՞ւմ է ուղեբեռի պահասենյակ:
Հովսեփ Աղաբաբյան (35 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում գործում է ուղեբեռի պահասենյակ, որը գտնվում է ժամանման սրահի հանրային գոտում:
«Զվարթնոց» օդանավակայան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 1 կտոր ուղեբեռի՝ մինչեւ 24 ժ. պահելու վճարը 3000 դրամ է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Արդեն երկրորդ օրն է՝ Երեւանի կենտրոնում՝ Աբովյան-Մոսկովյան փողոցների խաչմերուկում, կոտրված ընկած է կողմնորոշիչ վահանակը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 +9 +20 + 23
Կոտայքի լեռներ	+ 4 + 9 +19 + 22
Կոտայքի նախալեռներ	+13 + 14 +23 + 26
Գեղարքունիք	+ 5 + 9 +19 + 22
Լոռի	+7 + 12 +20 + 22
Տավուշ	+10 + 15 +23 + 25
Արագածոտնի լեռներ	+ 6 + 10 +19 + 22
Արագածոտնի նախալեռներ	+12 + 15 +22 + 26

Արարատ	+15 + 18 +26 + 28
Արմավիր	+14 + 16 +26 + 28
Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 +18 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+15 + 18 +26 + 28
Սյունիքի հովիտներ	+15 + 19 +25 + 29
Սյունիքի նախալեռներ	+ 2 + 12 +18 + 21
Արցախ	+15 + 19 +25 + 29
Երեւան	+ 16 + 18 +27 + 29

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*